ECOGLOBE

# ՕՐԳԱՆԱԿԱՆ ՍԵՐՏԻՖԻԿԱՑՄԱՆ ԳՆԱՑՈՒՑԱԿ
## (ԵՄ, ԱՄՆ ԱՕԾ , JAS)

**Code-GC/DM/LFCIS-10.4.1**
**NOP LFTC-180216**
**JAS LFTC-20.15-01022021**

Հաստատման ամսաթիվ՝ **17.05.2024**
Հրապարակման ամսաթիվ՝ **17.05.2024**

Ինչպե՞ս պլանավորել սերտիֆիկացման գինը

Սերտիֆիկացման տարեկան արժեքը հաշվարկվում է հետևյալ հիմնական ծառայությո ւնների հիման վրա ՝

Հիմնական սերտիֆիկացման ծառայություններ

1. Հայտի վճար՝ միանգամյա վճար հայտի ներկայացման հետ մեկտեղ՝ 55000 ՀՀ դրամ:
2. Տարեկան ստուգայցի վճար
3. Տարեկան սերտիֆիկացման վճար

Այս վճարները ենթակա են համապատասխանեցման սերտիֆիկացվող պրոյեկտի չափի, բարդության և հայցվող ստանդարտների քանակներից ելնելով և

Հավելյալ ծառայություններ

4.Արտահանման սերտիֆիկատներ
5.Այլ ծառայություններ
6. Արագացված և շտապ ծառայություններ

Հայաստանյան արտադրողների համար՝ ԵՄ և/կամ ԱՄՆ Ազգային Օրգանական Ծրագրի և/կամ JAS ստանդարտներով սերտիֆիկացվելու դեպքում տարեկան արժեքի մեջ արտադրողները կստանան ՀՀ Օրգանական Գյուղատնտեսության Մասին օրենքին համապատասխան ՀՀ սերտիֆիկացումը

Հիմնական սերտիֆիկացման ծառայություններ

| Ծառայության անվանում | Նկարագիր | Արժեք | Հավելյալ մեկնաբանություններ |
|---|---|---|---|
| Հայտի վճար | Հայտի վճարը հաշվարկվում է ոլորտների քանակով: | 55,000 ՀՀԴ/ոլորտ | Հայտի վճարը վերադարձի ենթակա չէ: |
| Ստուգայցի վճար | Վճարը հաշվարկվում է օրեկան սկզբունքով: Վճարը ներառում է ստուգայցի տևողությունը և հաշվետվությունը: | 140,000-330,000 ՀՀԴ/օր | Ստուգայցի արժեքները ըստ երկրների ներկայացված են ստորև: |
| Երկիր | Օրեկան վճար ՀՀԴ | Երկիր | Օրեկան վճար ՀՀԴ |
| Հայաստան | 140 000 | Լիբանան և տարածաշրջան | 220 000 |
| Ռուսաստանի Դաշնություն | 220 000 | ՄԱԷ | 275 000 |
| Ուկրաինա | 165 000 | Եգիպտոս | 275 000 |
| Ղազախստան | 220 000 | ԵՄ երկրներ | 275 000 |
| Բելարուս | 165 000 | Լատինական Ամերիկայի երկրներ | 220 000 |
| Կենտրոնական Ասիայի երկրներ | 195 000 | Բալկանյան երկրներ և Կենտրոնական Եվրոպա | 220 000 |
| Պարսկաստան | 220 000 | Այլ երկրներ | 165,000-330,000 |
| Ճանապարհածախս | Ճանապարհածախսը հաշվարկվում է ի հավելումն Ստուգայցի վճարին, որը վերաբերվում է տեսուչի դեպի արտադրողը ճանապարհորդելու ժամանակին և ներառում է սնունդը: | Ստուգայցի օրավճարի արժեքի 50% * | *Հայաստանյան արտադրողների համար՝ այս վճարը կազմում է 11,000 ՀՀԴ/ժամ, որը ներառում է ժամանակը, տրանսպորտը և սնունդը: Կացության համար կգանձվի 22,000 ՀՀԴ մեկ գիշերվա համար: Եթե փաստացի կացության գինը գերազանցի 22,000 ՀՀ դրամը, ապա կգանձվի կացության փաստացի գումարը: |
| Սերտիֆիկացման վճար | Սերտիֆիկացման վճարը ներառում է փաստաթղթերի և հաշվետվությունների ուսումնասիրությունը, անհամապատասխանությունների ուսումնասիրությունը, շտկման գործողությունների մշակումը, սերտիֆիկացման որոշումները, պիտակների ուսումնասիրությունը և հաստատումը (տարեկան մինչև 5 պիտակ անվճար) և սերտիֆիկատները:<br><br>Եթե հաճախորդը դիմում է բազմակի ստանդարտների համապատասխան սերտիֆիկացման, ապա սերտիֆիկացման վճարը բազմապատկվում է ստանդարտների քանակի թվով: | 275,000 ՀՀԴ/օր/ստանդարտ | Սերտիֆիկացման վճարը հաշվարկվում է գործունեության բարդության, դրա չափերի և կիրառվող ստանդարտների քանակի հիման վրա: Մեկ ստանդարտ հայցած պարզ և փոքր գործունեության համար այս վճարը կհաշվարկվի մեկ օր: Հավելյալ սերտիֆիկացման օրեր կարող են հաշվարկվել այն դեպքերում, երբ հաճախորդը անպարտաճանաչ է անհամապատասխանությունների արձագանքման ու շտկման հարցերում, կամ ցանկացած այլ դեպքում, որը կառաջացնի վարչարարության, ծառայության կամ այլ տիպի աշխատանքի ծավալի ավելացում սերտիֆիկացման գործընթացում: |

| | | | |
|---|---|---|---|
| Գրասենյակային օրվա վճար | Այս վճարը վերաբերվում է այն դեպքերին (բացի տարեկան փաստաթղթերի,ստուգայցի և սերտիֆիկացման փաստաթղթերի ուսումնասիրությունից), երբ անհրաժեշտ են հավելյալ աշխատանքներ որոնցից են՝ լրացուցիչ ուսումնասիրությունները գրականության մեջ, տեղեկատվության որոնումները այլ աղբյուրներից, ինտերնետային ուսումնասիրությունները, փորձագիտական կարծիքները, պատասխանատու տեսուչների կամ հաճախորդի հետ վճռորոշ կամ վեճերի լրացուցիչ քննարկումները, այսինք այն ամենը, ինչը անհրաժեշտ է տեղեկացված որոշում կայացնելու համար: | 165,000 ՀՀԴ/օր | Գրասենյակային օրվա վճարը կարող է կիրառվել նաև մեծ ծավալով փաստաթղթերի կամ գրանցումների ուսումնասիրության դեպքում: Գրասենյակային օրերի քանակը որոշվում է հայցվող պրոյեկտի չափերը և բարդությունը հաշվի առնելով և ներառում է վարչարարական ծախսերը: Արտադրողի անպատասխանատվությունը և աշխատանքային անճշտությունները ևս կարող են առաջացնել գրասենյակային օրվա կիրարկման կարիք: |
| Ադմինիստրատիվ վճար | Ադմինիստրատիվ վճարը վերաբերվում է գործավարական և հաղորդակցման ծառայություններին և հաշվարկվում է օրեկան, ոլորտների և/կամ ստանդարտների քանակի սկզբունքով: | 55,000 ՀՀԴ/օր/ոլորտ/ստանդարտ | Սերտիֆիկացման ետ կանչման և/կամ դադարեցման դեպքում ադմինիստրատիվ վճարը վերադարձի ենթակա չէ: |
| Հայաստանյան փոքր ֆերմեր | Հայաստանյան փոքր ֆերմերների համար սահմանվում է հատուկ գին: Փոքր են համարվում այն ֆերմերները, որոնց սեփական կամ վարձակալած հողերի հանրագումարը չի գերազանցում երկու (2) հեկտար: | Հայտի վճար՝ 38,000 ՀՀԴ Ստուգայց և սերտիֆիկացում՝ 275,000 ՀՀԴ/ստանդարտ | Կիրառելի են հավելյալ վճարներ ճանապարհածախսի, ադմինիստրատիվ և գրասենյակային օրերի ծառայությունների համար: |
| Հավելյալ ծառայություններ | | | |
| Արտահանման սերտիֆիկատներ (տրանզակցիոն սերտիֆիկատներ, ստուգման սերտիֆիկատներ) | Արտահանման սերտիֆիկատները պարտադիր են օրգանական արտադրանքի արտահանման ժամանակ և տրամադրվում են յուրաքանչյուր արտահանվող խմբաքանակի համար: | 27,000 ՀՀԴ/հատ | Կարող է ավելանալ փաստացի սուրհանդակային ծառայության վճար: |
| Նմուշառման վճար | Նմուշառման վճարը կարող է առաջանալ այն դեպքերում, երբ պահանջվում է կատարել նմուշառում տարեկան պարտադիր ստուգայցի շրջանակներից դուրս: | 27,000 ՀՀԴ/նմուշ | Հավելյալ ճանապարհածախսի,բանկային միջնորդավճարների, սուրհանդակային ծառայության, լաբորատոր փորձաքննության ծառայությունների վճարները կհաշվարկվեն ամեն դեպքի հետ կապված: Ենթակապալի կողմից կատարված նմուշառման ծառայության վճարը կհաշվարկվի փաստացի արժեքի հիման վրա: |
| Լաբորատոր փորձաքննության ծառայություն | Լաբորատոր փորձաքննության անհրաժեշտության դեպքում կհաշվարկվի ծառայության փաստացի արժեքը, տրամադրված ենթակապալ լաբորատորիայի կողմից: Հաշվարկը կարող է ներառել բանկային միջնորդավճարի, հարկային կամ մաքսային տուրքերի և սուրհանդակային ծառայությունների արժեքների փոխհատուցման վճարները: | Հաշվարկային՝ յուրաքանչյուր դեպքի համար | ԷԿՈԳԼՈԲ ՍՊԸ համագործակցում է միայն ISO 17025 հավատարմագրված լաբորատորիաների հետ: |
| Պիտակի հաստատում | Տարեկան մինչև 5 պիտակների ուսումնասիրությունը և հաստատումը ներառված է տարեկան սերտիֆիկացման վճարի մեջ: Այս վճարը վերաբերվում է հավելյալ պիտակների ուսումնասիրությանը և հաստատմանը: | 5,500 ՀՀԴ/պիտակ | |

| | | | |
|---|---|---|---|
| Նյութերի հաստատում | Այն հավելյալ գյուղատնտեսկան կիրառման նյութերը, վերամշակման օժանդակ նյութերը կամ բաղադրիչները, այլ արտադրական նյութերը, որոնք չեն ներկայացվել տարեկան Օրգանական Պլանի՝ ՕԿՊ, և տարեկան փաստաթղթերի հետ, կգնահատվեն և կհաստատվեն այս ծառայության ներքո: | 14,000 ՀՀԴ/նյութ | Այս ծառայությունը չի վերաբերվում նյութեր արտադրողների և/կամ վաճառողների սերտիֆիկացմանը: Նման արտադրողները/վաճառողները կսերտիֆիկացվեն նույն սկզբունքով, ինչ օրգանական արտադրողները, գնացուցակի հիմնական ծառայությունների կիրառմամբ: |
| Այլալեզու սերտիֆիկատներ | Սերտիֆիկատները կարող են տրամադրվել նաև այլ լեզուներով: Սերտիֆիկատների բնօրինակ լեզուն անգլերենն է (բացառությամբ ՀՀ ազգային սերտիֆիկատի). | 27,000 ՀՀԴ/լեզու | |
| Սերտիֆիկացման փաստաթղթերի թարգմանություն | Եթե անհրաժեշտ է թարգմանել սերտիֆիկացման փաստաթղթերը (օր.՝ ստուգայցի հաշվետվություն, սերտիֆիկացման որոշում, այլ), ապա կկիրառվի այս ծառայությունը: | 55,000-110,000 ՀՀԴ, կախված ծավալից | |
| Չնախատեսված ծառայություններ | Այն ծառայությունները, որոնք տեղ չեն գտել սույն գնացուցակում, կհաշվարկվեն համաձայն այս սակագնի: | 55,000 ՀՀԴ/ժամ | Այն դեպքերում, երբ կպահանջվի օրեկան հաշվարկ, կկիրառվեն ստուգայցի վճարի սակագները: |
| Տեղեկատվական կամ ուսումնական ծառայություններ: JA **Grading Training** (ճապոնական ստանդարտով նախատեսված գնահատման ուսուցումներ) | Այս ծառայությունը վերաբերվում է հաճախորդի կողմից հայցված տեղեկատվական և/կամ ուսումնական միջոցառումներին, միտված սերտիֆիկացման համակարգերի և ստանդարտների պահանջների պարզաբանմանը: | Տեղեկատվական կամ կրթական ծառայությունները կհաշվարկվեն օրեկան սկզբունքով՝ համաձայն ստուգայցի վճարի սակագների: | Այն դեպքերում երբ կպահանջվի ժամային հաշվարկ, ծառայության արժեքը կկազմի 55,000 ՀՀԴ/ժամ: |
| <u>Արագացված և շտապ ծառայություններ</u><br>Այն դեպքերում երբ հաճախորդին անհրաժեշտ է շտապ արձագանք փաստաթղթերի ուսումնասիրության, արտահանման սերտիֆիկատի, նոր արտադրանք հաստատելու, պիտակներ հաստատելու, նյութեր հաստատելու, ինչպես նաև եթե հաճախորդն ունի բավականաչափ հնարավորություն կարճ ժամկետում կատարելու սերտիֆիկացման բոլոր պահանջները և սերտիֆիկացվել, այդ դեպքերի համար «ԷԿՈԳԼՈԲ» ընկերությունը նախատեսել է արագացված և շտապ ծառայությունների սակագներ, ի հավելում վերը նկարագրված արժեքներին : | | | |
| Արագացված հայտ և ստուգայց | Նախատեսված է նրանց համար, ովքեր կհայցեն արագացված հավելյալ ստուգայց: Նոր հայտատուների համար հայտի գումարը ներառված է: | 220,000 ՀՀԴ | Գանձվում է ի հավելում սովորական վճարին: |
| Նոր արտադրական միավորի ներառում (ընթացիկ) | Նախատեսված է նրանց համար, ովքեր կհայցեն արագացված հավելյալ սերտիֆիկացում նոր արտադրական միավորի համար: | 550,000 ՀՀԴ/ միավոր | Կիրառելի է ընթացիկ սերտիֆիկացման դեպքում, երբ արտադրական միավորը չէր ներկայացվել նախապես, տարեկան Կառավարման Պլանում: |
| Նոր հողակտոր կամ վայրի հավաքի միավոր (ընթացիկ) | Նախատեսված է նրանց համար, ովքեր կհայցեն արագացված հավելյալ սերտիֆիկացում նոր հողակտորի կամ վայրի հավաքի միավորի համար: | 275,000 ՀՀԴ / միավոր | Կիրառելի է ընթացիկ սերտիֆիկացման դեպքում, երբ հողակտորը կամ վայրի հավաքի միավորը չէր ներկայացվել նախապես, տարեկան Կառավարման Պլանում: |
| Շտապ ծառայություններ | Շտապ ծառայությունները կիրառելի են արագացված ծառայութունների և/կամ փաստաթղթերի տրամադրման դեպքում: | 2 աշխատանքային օրում՝ 165,000 ՀՀԴ/ծառայություն<br><br>5 աշխատանքային օրում՝ 80,000 ՀՀԴ/ծառայություն | |

Գնային հաշվարկ և Գնային առաջարկ

Այն բաղկացած է Հիմնական և Հավելյալ ծառայություններում նկարագրված ծառայությունների համադրումից: Գնային առաջարկը կտրվի հաշվարկային տեսքով, մեկ արտադրական տարվա կտրվածքով:

Գնային առաջարկը չի պարունակում՝

- Տրանսպորտային ծախսերը և կացության ծախսերը:
- Հավելյալ ստուգայցերը, որոնց կարիքը կարող է առաջանալ ընթացիկ տարում, օրինակ՝ արգելված նյութերի մնացորդների հայտնաբերման դեպքում, կամ շտկման գործողությունների կատարման փաստը հաստատելու նպատակով և այլ:
- Լաբորատոր փորձաքննությունների և/կամ սուրիանդակային ծառայությունների ծախսերը:

Նշում՝ տեղեկացնում ենք , որ սերտիֆիկացման նպատակով պահանջվում է 100% կանխավճար, տարեկան նախահաշիվը տրամադրելուց մեկ ամսվա ընթացքում: Որոշ դեպքերում կարող է սահմանվել վճարումների կատարման ժամանակացույց, հաշվի առնելով հաճախորդի կողմից ներկայացված առանձնահատուկ իրավիճակը:
Այն դեպքերում երբ հաճախորդը ետ է կանչում սերտիֆիկացումը արդեն իսկ տրամադրած ստուգայցից հետո, հաճախորդից կգանձվի փաստացի տրամադրված ծառայությունների արժեքները, ինչպես նաև չհատուցվող արժեքները:
Հայտի վճարը և Ադմինստրատիվ վճարը հատուցման ենթակա չեն:

Նշում՝ ԱՄՆ ԱՕԾ/ՆՕՊ և ԵՄ ստանդարտներով տրամադրվող բոլոր տեսակի դադարեցման, ժամանկավոր դադարեցման, մերժման, առաջարկվող կասեցման, ետ կանչի և այլ որոշումները համարվում են Սերտիֆիկացման ծառայություն:

Զեղչեր

Զեղչերը կիրառելի են միայն ԷԿՈԳԼՈԲ կողմից տրամադրվող ծառայությունների համար:
Զեղչերը կիրառելի ՉԵՆ երրորդ կողմերից տրամադրվող ծառայությունների համար, ինչպիսիք են օրինակ՝ լաբորատոր փորձաքննությունը, սուրիանդակային ծառայությունները, բանկային միջնորդավճարները և այլ:
Զեղչերը կիրառելի ՉԵՆ «Հայաստանյան փոքր ֆերմեր» կատեգորիայի համար ( **տես բացատրությունը ստորև):

| | |
|---|---|
| 10% զեղչ | ●ընտանեկան կոպերատիվներ<br>●տարիքային կենսաթոշակառու ֆերմերներ և ԱՁ-ներ<br>●1 ոլորտի գործունեություն վարող և 2 ստանդարտ հայցած արտադրողներ (օրինակ՝ գյուղատնտեսության գործունեություն ԵՄ և ԱՄՆ ԱՕԾ/ՆՕՊ ստանդարտների համապատասխան)<br>●2 ոլորտի գործունեություն վարող և 1 ստանդարտ հայցած արտադրողներ (օրինակ՝ վերամշակման և վայրի հավաքի գործունեություն ԵՄ ստանդարտի համապատասխան)<br>●**«Հայսատանյան փոքր ֆերմեր» կատեգորիայի արտադրողները, որոնք հայցում են նաև այլ գործունեության սերտիֆիկացում, կստանան 10% զեղչ միայն այլ հավելյալ գործունեության համար:<br><br>Նշում՝ զեղչերի տրամադրման համար անհրաժեշտ է ներկայացնել համապատասխանության ապացույցներ: Զեղչերը կիրառելի են միայն մեկ համապատասխանության չափանիշով: |
| 20% զեղչ | ●պատերազմի վետերան ֆերմերներ և ԱՁ-ներ<br>●հաշմանդամության կարգ ունեցող ֆերմերներ և ԱՁ-ներ<br>●2 և ավել ոլորտներում գործունեություն վարող և 2 և ավել ստանդարտներ հայցած արտադրողներ (օրինակ՝ վերամշակման և վայրի հավաքի գործունեություն ԵՄ և ԱՄՆ ԱՕԾ/ՆՕՊ ստանդարտների համապատասխան):<br>●3 և ավել ոլորտներում գործունեություն վարող և 1 ստանդարտ հայցած արտադրողներ (օրինակ՝ վերամշակման, գյուղատնտեսության և վայրի հավաքի գործունեություն ԵՄ ստանդարտների համապատասխան):<br><br>Նշում՝ զեղչերի տրամադրման համար անհրաժեշտ է ներկայացնել համապատասխանության ապացույցներ: Զեղչերը կիրառելի են միայն մեկ համապատասխանության չափանիշով: |

Սերտիֆիկացման գնային առաջարկը կարելի է ստանալ ներկայացնելով հայտ «ԷԿՈԳԼՈԲ» գլխավոր գրասենյակ: Հայտի ձևի ստացման համար, ինչպես նաև այլ հարցերով կարող եք գրել նամակ info@ecoglobe.com էլեկտրոնային հասցեով:

«ԷԿՈԳԼՈԲ» ընկերությունը առաջարկում է թափանցիկ, հիմնավորված ու մրցունակ գներ, որոնք հասանելի են բոլորի համար:
Ընկերությունը կարող է գանձել լրացուցիչ վճարներ հավելյալ ծառայությունների համար:

Այլ ծառայությունների ցանկին են պատկանում այնպիսի ծառայություններ, ինչպիսիք են՝ միջազգային, մասնավոր կամ այլ ստանդարտներին համապատասխանության հավաստատում կամ նյութերի հաստատում (կազմակերպության իրավասությունների շրջանակներում), ինչպես նաև լրացուցիչ վերամշակման միավորների, տարեմիջյան շրջանում նոր հողակտորների կամ նոր արտադրատեսակների հավելյալ սերտիֆիկացում, արտահանման փաստաթղթերի լրացում, լրացուցիչ պիտակների կամ բաղադրիչների հաստատում, ինչպես նաև շտապ ծառայություններ, սերտիֆիկատների, հաշվետվությունների, կամ սերտիֆիկացման ու ստուգայցերի հետ կապված փաստաթղթերի հանդեպ լրացուցիչ պահանջների առաջացման դեպքերում:

Այլ արժույթներով առաջարկների դեպքում այն կհաշվարկվի տվյալ օրվա տարադրամի փոխարժեքին համապատասխան: ԱԱՀ կիրառելի չէ: